

յետ երկու ամաց, այսինքն 829ին, ըստ Կաղանկատուացիի, կը պատերազմի ընդդէմ Տաւուսիին, որ խալիֆայական բանակով մը Բարակի դէմ ելած էր: Տաւուս կը պարտուի եւ իր 150.000նոց բանակը կը հալածուի Բարակէն: Դարձեալ նոյն պատմիչին համաձայն՝ ի միւսում տարին Բարակ պարտութեան կը մատնէ, 830ին, Աբրահիմ գորդին Ղեքայ արար հրամանատարը⁽⁸⁾:

Նոյն այս 830 տարին, կ'երևի թէ Բարակ Արբաճամի հետ զբաղած ըլլալուն պատճառով՝ Սիւնեաց մէջ դարձեալ կ'ապրտամբին Բարակի դէմ: Կաղանկատուացի որ միակ աղբիւրն է այս ապտամբութեան պատմութեան, կը դբէ. Ի նմին ամի (830) դաւաճանողքն ի սէր եւ ի խաղաղութիւն, որոց անուանք Դաւոն եւ Շապուռն քանաչէր, սպանին զՍտեփաննոս ըզկոչեցեալն Աբլասադ, որ էածն զԲարակն եւ եհար զԲաղադիսն:

Կաղանկատուացիի վկայութեան պէտք է հետեւցնել որ Բարակ Գեղարքունիքը 827ին աւերելէ վերջ՝ խաղաղութիւն կրնաքած էր Սիւնեաց իշխանաւորներուն հետ: Այս խաղաղութիւնը տեւած է մինչև 830, երբ Բարակ ստիպուած էր ճակատիլ Արբաճամի բանակին դէմ: Ասիկա յարմար առիթ նկատելով՝ երկու առաջնորդները, որոնք Դաւոն եւ Շապուռն կը կոչուէին, դարձեալ կ'ապտամբին: Դաւոնի եւ Շապուռնի ինքնութիւնը որոշ է: Դաւոն կըրնայ Դաւիթին տեղական մէկ ձեւը ըլլալ: Շապուռն զործածական էր թէ՛ Հայոց եւ թէ՛ Պարսից: Հաւանական է որ երկուքն ալ հայեր ըլլային: Ասոր ապացոյց է Կա-

ղանկատուացիի վկայութեան այն մասը, վերջին մասը, զոր յառաջ բերինք բաւական վերը: Հոս մենք դարձեալ նկատի պիտի առնենք այդ հատուածը իր կարգին:

Բարակի դէմ ապտամբները, որոնք կը դաւաճանէին սիրոյ եւ խաղաղութեան, նախ կը սպաննէին Աբլասադ Ստեփաննոսեանը, որ էածն զԲարակն եւ եհար զԲաղադիսն, 826ին: Աբլ-Ասադ՝ Բարակի հետ Բաղաց, Գեղարքունեաց եւ Սիւնեաց ուրիշ մասեր նուաճելէ վերջ՝ անտարակոյս Բարակէ այդ Սիւսական մասերուն կառավարիչ նշանակուած էր: Ահա ապտամբները, առաջին առթիւ՝ Բարակի աջակից եւ անոր կառավարիչը կը սպաննէին, անշուշտ նախ իրր վրէժխնդրութիւն Բաղաց, Գեղարքունեաց աւերումին: Յետոյ իրր Բարակի կառավարիչ:

Դաւոն եւ Շապուռն հաւանաբար բոլոր Սիւնիքը իրենց ապտամբութեան կողմնակից չունէին, որովհետեւ անոնք նախ ճաշակած էին Բարակի խտուրթիւնը. երկրորդ՝ Բարակ իր զօրութեան բարձր կէտին վրայ կը դառնուէր դեռ այն ատեն: Անտարակոյս Բարակ իրեն հաւատարիմ եւ զործակից Սիւնեցի հայ իշխաններու, որոնցմէ էր Աբլ-Ասադ, տուած էր նաեւ իր աղանդաւորներէն պահակագործեր:

Սիւնեցի ապտամբները Աբլ-Ասադը սպաննելէ վերջ՝ ամբացան ի բերդն Գորդու, կալեալ զգաւառսն ամս տասն եւ երկու, որք են այստիկ՝ Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսակուն, Հաբանդ, Ամարաս, Պազկանիք, Միսանիք, եւ Տրի գաւառ (Կաղանկատուացի):

Պատմիչին տուած ամս տասն եւ երկուսն

(8) Հոս աւելորդ չեմ նկատեր ճշտել ինքնութիւնը յիշեալ Աբրահական բանակներու հրամանատարներուն:

Կաղանկատուացիի Տաւուսիքը՝ Մուհամմատ իպն Հիւմայիտ ալ-Տուսին է, որ ալ-Մամունի հրամանատարներէն մէկն էր եւ որ պատերազմեցաւ Բարակի դէմ 829-30ին: Բարակի զայն պարտութեան մասնեց եւ սպաննեց:

Դարձեալ Կաղանկատուացիի յիշած Աբրահիմ

գորդին Ղեքայ՝ Իպրահիմ իպն ալ-Լայդն է: Ասոնցմէ զսա Բարակի պարտութեան մասնեց Եասեա իպն Մուսատ, Իսա իպն Մուհամմատ իպն Արի Սալիք եւ Ահմադ իպն ալ-Ճուսայիդ, որ զերի բունեց, Ջուրայիկ իպն Ալի իպն Մազակա, որ ալ-Մամունէ Հոյաստանի կառավարիչ նշանակուած էր:

Բարակ իր պատերազմներու ընթացքին 255-500 հոգի սպաննեց, ըստ Տարբրի: